«ՀԱՍՏԱՏՈՒՄ Է»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր,
իրավ. դոցենտ
_____ Մ. Մուրադյան
«19» ____06____ 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի՝ «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ. Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա. Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ. Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Մ. Խաչատրյանի իրավաբանական գիտությունների թեկնածու Գ.Գ. Ստեփանյանի քննարկեց Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի՝ «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Վ. Համբարձումյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարը ցանկացած պետության առաջնահերթություններից է, քանի որ ոչ միայն այդ շրջանառությունն է հանցավոր, այլ նաև այն, իր հերթին,

հանգեցնում է այլ հանցանքների կատարման համար, ինչպես նաև նպաստում է հանցավոր խմբավորումների վտանգավորության աճին: Հաշվի առնելով, որ զենքի շրջանառության կարգավորումն էական փոփոխության է ենթարկվել «Զենքի շրջանառության կարգավորման» օրենքով: Նաև ՀՀ քրեական նոր օրենսգիրքը վերանայել է որոշ կարգավորումներ, որոնք գիտագործնական տեսանկյունից ունեն էական նշանակություն:

Օրենսդրական փոփոխություններին զուգահեռ հարկ է նշել զենքի ապօրինի շրջանառության վիճակագրությունը, որն ունի աճի միտում: Այսպես, 2021 թվականին ՀՀ-ում արձանագրվել է զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 617, 2022 թվականին՝ 681, 2023 թվականին՝ 999, 2024 թվականին՝ 698, իսկ 2025 թվականին՝ 945 դեպք:

Ատենախոսության թեմայի արդիականության մասին է վկայում նաև այն, որ սույն հիմնախնդրին վերաբերող հարցերին անդրադարձել են ՀՀ վճռաբեկ դատարանը՝ իր նախադեպային որոշումներում, ինչպես նաև առաջին ատյանի դատարանները՝ երբեմն կայացնելով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին հակառակ դիրքորոշում հայտնելով:

Իրականացված հետազոտությունն ընդգրկել է ծավալուն առարկա՝ զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրների համալիր և համապարփակ ուսումնասիրելը, առկա խնդիրները վերհանելը և դրանց լուծման առաջարկներ ընդունելը:

Այդ նպատակին համահունչ հեղինակն առանձնացրել է 6 խնդիրներ, որոնք հաջողությամբ լուծել է: Այդ խնդիրներին համապատասխան ձևավորվել է ատենախոսության կառուցվածքը:

Հետազոտության գիտական նորույթը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ներկայացված ատենախոսությունը հայրենական իրավագիտության շրջանակներում առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն

է, որտեղ հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկվել և վերլուծվել են զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները:

Հետազոտության գիտական նորույթն ապահովվել է նաև ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներով, որոնք ոչ միայն բխում են ատենախոսության նպատակից, այլ նաև հնարավորություն են տալիս փաստել, որ ատենախոսը բազմակողմանի է ուսումնասիրել բարձրացված հիմնախնդիրները և կարողացել է համադրել քրեաիրավական կարգավորումներն այլ իրավակարգավորումների հետ:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է պատշաճ մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրներով, իրավական և փորձառական հիմքով, ներառյալ՝ դատական ակտերով:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Անդրադառնալով զենք կրելուն՝ ատենախոսը թե՛ ներածության (էջեր 11-12), թե՛ բուն աշխատանքում (էջ 109), թե՛ եզրակացությունում (էջեր 161-162) մատնանշում է օրենսդրական սահմանման մասնակի լինելը և առաջարկում է հեղինակային փոփոխություն, այն է՝ «զենք կրել՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենք տեղափոխել չհամարվող արարքը և զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում կամ գրպանում դրված կամ ձեռքում բռնած վիճակում, **ինչպես նաև զենքի գտնվելն այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն**»: Նախ, հեղինակն օրենսդրական սահմանումից հանել է նետողական զենքին վերաբերող կարգավորումը, այն է՝ «իսկ նետողական զենքի դեպքում՝ նետման համար նախատեսված և դրա վրա տեղադրված նետվող հարմարանքով», սակայն որևէ հիմնավորում դրա առնչությամբ չի ներկայացրել: Բացի այդ, հեղինակը վերլուծում է ոչ միայն «Զենքի շրջանառության կարգավորման» օրենքը, այլ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2.10.2006թ.-ի ՎԲ 223/06 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, տեսական նյութեր և դատական այլ

պրակտիկա, և ներկայացնում է այնպիսի մի առաջարկ, որը ոչ միայն հակասում է գործող օրենսդրական կարգավորումներին, այլ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը և ձևավորված մեծամասնական պրակտիկային: «Nulla poena sine lege» սկզբունքի համաձայն՝ անձին հնարավոր է ենթարկել պատժի միայն այն արարքի համար, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: Հեղինակն արհեստականորեն ընդլայնում է «զենք կրել» հասկացությունը՝ դրա մեջ ներառելով զենքի գտնվելն այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն: Նման ձևակերպումը հեղինակը հիմնավորում է տեսական գրականությամբ՝ հիմնականում մեջբերելով մինչև ՀՀ քրեական նոր օրենսգիրքն ու «Զենքի շրջանառության կարգավորման» օրենքն ուժի մեջ մտնելը ձևավորված մասնագիտական կարծիքները, իսկ հայրենական նոր գրականություն առհասարակ չի ուսումնասիրել: Հեղինակը ներկայացրել է նաև ռուս 2 հեղինակների կարծիք (էջ 98)՝ հիմնավորելով հասանելիության ցուցանիշը նաև օտարերկրյա պետության օրենսդրությամբ, սակայն անտեսել է թե՛ ՌԴ օրենսդրությամբ «զենք կրել» եզրույթի սահմանումը, որտեղ կրկին անմիջապես գործադրելու մասին ոչինչ չի ասվում, թե՛ ՌԴ այլ մասնագետների և հեղինակների կարծիքները՝ մասնավորապես ՌԴ օրենսդրական կարգավորման հստակեցումից հետո (համացանցում հակիրճ ուսումնասիրությունը բացահայտեց, որ 20-ից ավելի ՌԴ հեղինակներ բացառում են զենքի գտնվելն այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն, դիտարկել որպես զենք կրել): Ատենախոսը նաև 99-101-րդ էջերում վկայակոչում է 3 դատական ակտ, որտեղ օրենքին և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում են հայտնել դատարանները: Դրան հակադրելով թվով ավելի շատ դատական ակտեր՝ հեղինակը միևնույնն է՝ համարում է, որ սակավաթիվ պրակտիկան պետք է ստանա օրենսդրական ձևակերպում: Ավելին, զենքի գտնվելն այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն, լրացումը հիմնականում բերվում է տրանսպորտային միջոցների օրինակով, սակայն նման ձևակերպումն ակնհայտորեն դուրս է գալիս այն ենթատեքստից, որն առկա է հեղինակի մոտ: Դիցուք, անձն իր բնակարանում՝ շքամուտքի դռան անմիջապես մոտ ամրացված կեռից կախել է սառը զենք և ցանկացած պահին անմիջապես գործադրելու իրական հնարավորություն ունի այն և

կախել է այնտեղ հենց այդ նպատակով՝ ընդամենը ձեռքի մեկ շարժումով այն վերցնելով: Բերված օրինակը համադրելով հեղինակի առաջարկվող սահմանման հետ՝ ակնհայտ է, որ դա նույնպես պետք է համարել զենք կրել, մանավանդ, եթե այլ սառը զենքերի համար նրա բնակարանում առանձին պահելու չիրկիզվող պահարան լինի:

Հետևաբար, հեղինակի՝ վերը նշված առաջարկը կարող է գոյություն ունենալ տեսության մեջ, սակայն օրենսդրական փոփոխության առաջարկ ներկայացնելու համար բավարար չէ, և զենքի անմիջապես գործադրելու հնարավորության համար ընտրվել է ոչ համաչափ իրավական լուծում (դա հնարավոր է քննարկվող արարքը որպես ինքնուրույն արարք նախատեսելու դեպքում՝ չներառելով կրելու մեջ):

2. Ատենախոսության 158-րդ էջում հեղինակն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր 334.1-ին հոդվածով՝ ներկայացնելով համապատասխան մեկնաբանություններ և հիմնավորումներ: Առաջարկվող հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն պատժելի է հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղբով կամ սայրով ծալովի դանակի), կոփազենք, լախտ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելը: Նախ այդ սահմանման մեջ «կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա» ձևակերպումն իրավական տեսանկյունից անորոշ է և փաստացի կիրառելի ցանկացած կտրող, ծակող, հարվածող, ջարդող առարկայի դեպքում: Ճիշտ է հեղինակն առաջարկվող 334.1-ին հոդվածի 4–րդ մասով նախատեսել է աշխատանքային, ծառայողական, մասնագիտական պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված քրեական պատասխանատվության բացառումը, սակայն այդ հարցը չի լուծում բազմաթիվ կենցաղային իրավիճակներում քրեական պատասխանատվության բացառումը: Օրինակ՝ անտառում սղոցով ծառ կտրելը կամ կացնով փայտ կոտրելն անձնական նպատակ հետապնդող գործողություն է, չի բխում աշխատանքային, ծառայողական, մասնագիտական պարտականությունները կատարելու անհրաժեշտությունից: Անտառը որպես հանրային վայր օրինակում նշվել է՝ հիմք ընդունելով հեղինակի առաջարկը՝ 334.1-ին հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ հանրային է համարվում ցանկացած վայր, որտեղ տվյալ պահին հանրությունն ունի կամ կարող է ունենալ ազատորեն մուտք

գործելու իրավունք: Այսինքն, առաջարկվող մասով հեղինակն ընդլայնում է «հանրային վայր» հասկացությունը, ինչը կրկին չի հիմնավորվել:

Նույն հոդվածի 4-րդ մասում հեղինակը հատուկ շեշտել է, որ նշված առարկաների կրումն ինքնապաշտպանության նպատակով արգելվում է: Սակայն պարզ չէ, այդ արգելքը հանգեցնելու է քրեական պատասխանատվության, թե՝ ոչ, և եթե հեղինակը դրա մասին առհասարակ չնշեր, ապա բացառությունների շարքում ինքնապաշտպանության բացակայությունը կհանգեցներ արարքն առաջարկվող հոդվածով որակելուն, իսկ կրկնակի արգելքի ամրագրումն առավել հարցեր է առաջացնում, քան լուծումներ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով «զենք կրել» եզրույթի ընդլայնումը, ակամա ստացվում է, որ ինքնապաշտպանության նպատակով ավտոմեքենայի մեջ վերը նշված առարկաների առկայությունը կրկին կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Իսկ նման մոտեցումը կարող է հանգեցնել մարդու իրավունքների անհարկի սահմանափակման՝ առավել ևս զենքի շրջանառության ազատականացման ներկայիս միտումների պարագայում՝ հասարակության որոշ խմբերին փաստացի զրկելով զենք չհանդիսացող՝ կտրող, ծակող, հարվածող, ջարդող առարկաներով ինքնապաշտպանվելուց, ներառյալ այն անձանցից, ովքեր օրինական զենքով կատարում են նրանց նկատմամբ ոտնձգություններ: Այս համատեքստում առաջանում է նաև անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի վերանայման հարցի քննարկումը կամ առաջարկվող հոդվածի էական խմբագրումը:

3. Հեղինակն օգտագործել է հիմնականում մինչև 2015 թվականի մասնագիտական գրականություն (մեկ գրականություն 2021 թվականի է և հեղինակի մեկ հոդված հրատարակվել է 2025թ.-ին), սակայն թե՛ հայալեզու, թե՛ օտարալեզու մասնագիտական նոր գրականություն, ներառյալ՝ 2025 և 2026 թվականների, չի օգտագործվել:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի՝ «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Վ. Համբարձումյանի ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Թումասյանի կողմից (քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2026 թ.-ի հունիսի 15 -ի նիստում, արձանագրություն № 6):

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական
ուսումնական ստորաբաժանման
քրեական իրավունքի և քրեական դատավարության
ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան

«15» 06 2026 թ.

Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքները
համակարգող պրոռեկտոր Ա. Սուքիասյան